**Արձանագրություն N 2**
**ՇՀԱՊՁԲ-11/12-ԳԱԿ-15/8 ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 17 դեկտեմբերի 2015թ.
ժ. 09:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան, Ռ. Մկրտչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Ղազարյան

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

(Հ. Հովհաննիսյան)

Գնային առաջարկների հայտերը բացվել են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի վարչական շենքում, Կոմիտաս 54/բ հասցեում, ծանուցման օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 09:45-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները, տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին**

(Հ. Հովհաննիսյան)

1.Սահմանված կարգով ս.թ. դեկտեմբերի 8-ին ծանուցվել են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ տվյալ պահին շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

2. Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| | | |
|---|---|---|
| 1. | «Տոպազ-95» ՍՊԸ | ք. Երևան, Բաղրամյան պող. 33ա, (010)225818, (091)427678 |
| 2. | «Միկրոռինգ» ՍՊԸ | ք. Երևան, Սայաթ-Նովա 33/63, (010)529421, (010)529422 |
| 3. | «ԼաննԱր Սերվիս» ՍՊԸ | ք. Երևան, 0002, Մաշտոցի պող., 27, բն. 11, (010)535311 |

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային առաջարկի ծարարներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0: